Վարդահովիտ

Բնակչության թիվը՝ 274

Վայոց ձորի մարզի Վարդահովիտ գյուղական համայնքը գտնվում է մարզկենտրոնից 34 կմ հեռավորության, ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գյուղական համայնքների ցանկում:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 10 712 հա հողատարածք՝ գյուղատնտեսական նշանակության՝ 10 630 հա, որից վարելահող՝ 227 հա, խոտհարք՝ 341 հա, արոտ՝ 9345 հա, իսկ այլ հողեր՝ 717 հա:

Համայնքում առկա է 130 գյուղացիական տնային տնտեսություններ, բնակչությունը՝ 274 մարդ:

Համայնքում 1989 թվականից բնակվում են փախստական և մարզի տարբեր գյուղերից երիտասարդ ընտանիքներ, ովքեր իրենց նախկին բնակավայրերում հնարավորություն չեն ունեցել բնակարան կառուցելու, ապրելու, տեղափոխվել և բնակություն են հաստատել Վարդահովիտ գյուղական համայնքում:

Համայնքի բնակիչները, բնակլիմայական պայմաններից ելնելով, զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ:

Գյուղն ունի հիմնական դպրոց, մշակույթի տուն, վարչական շենք, բուժկետ:

Գյուղը հեռախոսաֆիկացված է: